

Ա. Մուրվալյան

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Բոլոր ժողովուրդներն էլ ունեն զգացմունքներ՝ ուրախության կամ հրճվածքի, տխրության կամ թախծի, հաճույքի կամ սքանչացման, տհաճության կամ հիասթափման, բավականության կամ դժուարակության, դժգոհության կամ տրտունջի, կարոտի ու սիրո, ատելության ու զզվածքի, խրախուսանքի ու մտերմության, արհամարհանքի ու ծաղրի, արհուսանքի ու վախի, զարմանքի ու զայրույթի և այլն, որոնք լինելով հարուստ ու բազմազան՝ միաժամանակ շատ բարդ են, և այդ պատճառով էլ դրանց դրսևորումը կատարվում է տարբեր ձևերով ու միջոցներով: Այդ միջոցներից հիմնականը ձայնարկություններն են:

Ձայնարկությունները, որպես լեզվական երևույթ, այս կամ այն հասկացման, կարող ենք տեսնել աշխարհի բոլոր լեզուներում¹:

Ձայնարկությունները, ըստ արտաբերման, ինչպես հայտնի է, լինում են՝ 1) բացազանչական, որոնք ցույց են տալիս զանազան զգացմունքներ (ուրախության, տխրության, կարոտի, սքանչացման, վախի, արհամարհանքի, զզվածքի, զայրույթի և այլն, օրինակ՝ ծհ, օխ, օխայ, ահ, վահ, վայ, ախ, վախ, էհ, ուհ, վահ, վհ, ախոս...), 2) կոչական. նման ձայնարկություններով դրավում են ուրիշի ուղադրությունը, ուրիշին կանչում են, հրամայում, խրախուսում, կամ կանչում են կենդանիներին, քչում և այլն (օրինակ՝ հր, տո, ծո, քա, այ, ոյ, սուս, դե, օն, հո-հո, քը, փը, փը, փը...), 3) բնածայնական. նման ձայնարկություններով, սակայն, դրսևորվում են բնության տարբեր երևույթների որոշ հնչումները, որոնք ընկալվում են նրանց թողած առաջին կամ հանկարծական տպավորության տակ (օրինակ՝ շրախի, թրո, զը՛նդ, ծիլ-ծիլ, հաֆ-հաֆ...) և այլն:

Արտահայտման միջոցի տեսակետից, սակայն, ձայնարկությունները սահմանափակվում են այս կամ այն լեզվի մեջ եղած առանձին հնչյուններով կամ տարբեր հնչյունա-կոմպլեքսներով և հաճախ նրանց բազմազան ու բազմապիսի միացումներով ու կրկնություններով, որոնցով ուժեղացվում է տվյալ ձայնարկություններով արտահայտված իմաստը:

Ձայնարկություններն ընդհանրապես դրսևորելով մարդկային բարդ հույզերը (զգացմունքները) և հոգեկան ապրումները՝ բնորոշվում են ձայնի հատուկ արտաբերմամբ ու առողանությամբ: Այս պատճառով էլ ձայնարկությունների մեջ անհամեմատ ավելի ուժեղ են հուզական երանգավոր-

¹ Ձայնարկությունները, որպես համամարդկային լեզվական երևույթ, իրենց գոյացման կամ առաջացման շատ ու շատ կողմերով կարող են բազմաթիվ գույաններ ունենալ տարբեր լեզուներում, գույաններ, որոնք, բնականաբար, մեծ մասամբ փոխառության արդյունքը չեն: Չնայած դրան՝ ձայնարկություններն ունեն նաև իրենց որոշ յուրահատկություններ՝ տարբեր լեզուների հնչարտաբերման ունակություններն նայելով:

րուսները, առողջանական, արտահայտչական ու հնչյունական կողմը, քան խոսքի մյուս մասերի մեջ (սրա հետ միասին ձայնարկություններին զուգակցում են միաժամանակ մարմնի որոշ շարժումները, ժեստերն ու միմիկաները)։

Ձայնարկությունները մեծ մասամբ բառական (անվանական) արժեք և քերականական ձևավորում չունեն, դուրկ են նյութական նշանակությունից, նրանք, ինչպես հայտնի է, տարրերվում են խոսքի մյուս մասերից և կազմում են լեզվի, այսպես ասած, յուրահատուկ տարրերը։ Այս տեսակետից էլ լեզվաբանների մի մասը նույնիսկ վիճելի է համարում ձայնարկություններն իրեն խոսքի մաս ընդունելը։

Չնայած նրան, որ ձայնարկություններն ընդհանրապես բառական արժեք չունեն, բայց երբեմն նրանք ձեռք բերելով այդ հանգես են գալիս արդեն որպես լիարժեք բառեր, որոնք իրենց հերթին ստեղծում են մի շարք առանձին բառաձևեր և որոշ չափով հարստացնում լեզվի բառային կազմը։ Երբեմն էլ, ընդհակառակն, առանձին բառերից, հաճախ որոշ հնչյունափոխությամբ, առաջ են գալիս նոր, յուրահատուկ ձայնարկություններ։

Այսպիսով, որոշ ձայնարկություններից կարող են զարգանալ նոր բառական արժեքներ և, ընդհակառակը, առանձին բառերից էլ, իրենց հերթին կարող են առաջ գալ նոր ձայնարկություններ։

Այս տեսակետից էլ մենք այստեղ վերցնում ենք հայոց լեզվի ձայնարկությունները և ցույց ենք տալիս նրանց կապը լեզվի բառային կազմի հետ։ Այսպես՝

ա) Ձայնարկությունների դասդասման շուրջը. Բովանդակության տեսակետից ձայնարկությունների դասդասման հիմնական դժվարությունն այն է, որ միևնույն ձայնարկությունը միևնույն լեզվում կարող է տարբեր նշանակություններ ու առումներ ունենալ։ Ուստի նրանց առումները կարելի է միայն սահմանել ու ճշտել տեքստերով։

Այսպես, օրինակ, ախ ձայնարկությունը հիմնականում վշտի՝ ցավի բացագանչություն է, բայց դա՝ միաժամանակ որոշ կապակցությունների մեջ՝ կարող է արտահայտել նաև հիացմունք, ուրախություն, ցանկություն, կարոտ, զարմանք և այլն։ 'Աշտի՝ ցավի բացագանչություն է, օրինակ, «Ա՛խ, իմ ազիզ յարն է լալիս...» (Թ., 51, 25)¹, «Ա՛խ, կմեռնեմ, ամա նա...» (Թ., 64, 13)... և նման նախադասություններում, մինչդեռ այլ նախադասությունների մեջ արտահայտում է հիացմունք, ուրախություն, ցանկություն, կարոտ, զարմանք և այլ նման զգացմունքներ. օրինակ՝ «Ա՛խ, ինչ լավ է, եկ, սովորենք...» (Ա., 26, 11)², «Ա՛խ, ինչ եք ասում...» (Ա., 83, 24)³, «Ա՛խ, մի հասնենք այն սոսիներին...» (Մ., 4, 42)³, «Ա՛խ, Կարո, միթե դու Լս...» (Մ., 43, 27)... և այլն։

Այսպես նաև ահ ձայնարկությունը, որ համեմատաբար շատ քիչ է պատահում։ Սա ևս հիմնականում վշտի՝ ցավի բացագանչություն է, ինչպես նաև՝ զարմանքի, ուրախության և այլն, օրինակ՝ «Ա՛հ, սեր մանկու-

¹ Թ. հապավումն այստեղ ամեն տեղ ցույց է տալիս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Պոեմներ, 1887—1910, Երևան, 1940։

² Ա.—Ղ. Աղայան, Լճուխի երկեր, Միհատորյակ, Երևան, 1939։

³ Մ.—Մուրացան, Լճուխի երկեր, հատ. 1, Երևան—Մոսկվա, 1930։

թյան — անմոռաց է նա» (Հ., 310, 20)¹, «Ա՛հ, որքան է վարպետը սիրելու ատել նրանց» (Դ., 323, 25)², «Ա՛հ, դուք այստեղ հեղափոխական գրքեր եք կարդում...» (Զ., 51, 16)³... և այլն:

Այ ձայնարկությունը, օրինակ, տարրեր առումներ ունի: Սա, նախ և առաջ, հանդես է գալիս կոչական բառերի մոտ, ինչպես, օրինակ, «Ա՛յ սարի աղջիկ, այ սիրուն աղջիկ, այ դու կարմրաթուշ, թուխամազ Անուշ...» (Թ., 80, 4—7) և այլն: Այնուհետև այ ձայնարկությունը արտահայտում է ցուցական իմաստ, օրինակ՝ «Ա՛յ այս ծառերը...» (Մ., 18, 4), «Ա՛յ, հիմի կվերջացնեմ...» (Զ., 117, 2 ն.) և այլն: Այ ձայնարկությունը կարող է արտահայտել նաև զարմանք, սպառնալիք և այլն, օրինակ՝ «Ա՛յ ձեզ հանաք» (Ա., 57, 32), «Ա՛յ քեզր ախտ...» (Ա., 175, 26), «Ա՛յ դու անպիտան...» (Ա., 32, 4 ն.), «Ա՛յ չոռ քեզ...» (Դ., 82, 10 ն.)... և այլն:

Դե կամ դեռ ձայնարկությունը սովորաբար հորդորական՝ խրախուսական բացառանշություն է, ինչպես, օրինակ, «Դե, վեր կաց, սիրուն Արևհատ...» (Ա., 101, 5 ն.), «Դեհ, իմ նավակ, մենք սլացանք...» (Թ., 204, 15) և այլն: Այնուհետև՝ հիշյալ ձայնարկությունը հանդես է գալիս որպես հանդիմանություն, զգուշանալու, հրամայելու կամ համաձայնելու արտահայտություն և այլն, օրինակ՝ «Դեհ, էլ ետացնիլ չի պետք...» (Պ., 117, 26)⁴, «Դե, առ, հը...» (Պ., 141, 1), «Դե, ցած իջեք...» (Բ., 236, 11)⁵, «Դեհ, ժամանակ է, մեր վեպն ըսկըսենք...» (Հ., 370, 1), «Դե, մարշ» (Դ., 97, 1 ն.) և այլն:

Երանի կամ երնեկ ձայնարկությամբ խոսողը սովորաբար արտահայտում է իր ցանկությունը, օրինակ՝ «Երանի՛ թե կարոյի հետ փախած լինեի...» (Թ., 238, 1), «Ա՛խ, երանի՛ դարուն լինի...» (Ա., 24, 11—2), «Երնեկ մեռնեմ...» (Ի., 125, 11)⁶ և այլն: Այս նույն ձայնարկությամբ խոսողն արտահայտում է իր բարյացակամ զգացմունքը մեկի կամ մի բանի վերաբերմամբ, որին համարում է երջանիկ, բախտավոր, երանելի, օրինակ, «Երանի՛ տեսնողին... երանի՛ լսողին...» (Թ., 170, 142), «Երանի՛ քեզ, որ այսպիսի որդիք ունես»... և այլն:

Էն ձայնարկությամբ սովորաբար ցույց են տալիս անտարբեր վերաբերմունք կամ համակերպում որևէ բանի, օրինակ՝ «Է՛հ, ասում են, էլի...» (Մ., 303, 1—2), «Է՛հ, ինչ պիտի տանենք էս աշխարհքից» (Պ., 85, 14), «Է՛հ, էս ինչ անեմ...» (Զ., 157, 1 ն.) և այլն: Նույն ձայնարկությամբ արտահայտվում է նաև հանդիմանություն, դժգոհություն կամ տրտունջ. օրինակ՝ «Է՛հ, ամոթ է...» (Մ., 104, 12), «Է՛հ, մի խոսեցնի, աստված կսիրես...» (Թ., 42, 23), «Է՛հ, գլուխը քարը...» (Պ., 12, 1 ն.) և այլն: Նույն ձայնարկությամբ արտահայտվում է նմանապես ցանկություն, զարմանք, արհամարհանք դեպի մի առաջարկություն կամ անձ, օրինակ՝ «Է՛հ, ինչ եք ասում...» (Պ., 43, 9), «Է՛հ, աստված բարի վայելում տա...» (Դ., 193, 9 ն.), «Է՛հ, դու էլ բան ես ասում...» և այլն:

¹ Հ.—Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1937:

² Դ.—Դ. Դեմիրճյան, Երկեր, հատ. Ա., Երևան, 1946:

³ Զ.—Ս. Զորյան, Ընտիր երկեր, հատ. Ա., Երևան, 1946:

⁴ Պ.—Պերն Պոռոյան, Երկեր, հատ. Ա., Երևան, 1939:

⁵ Բ.—Բաֆֆի, Կայծեր, Երևան, 1947:

⁶ Ի.—Ավ. Իսահակյան, Ընտիր երկեր, հատ. 1, Երևան, 1939:

էյ ձայնարկությունը զրվում է, նախ և առաջ, մեկի ուշադրությունը գրավելու կամ հրավիրելու համար, օրինակ՝ «է՛յ, ինչ ես անում...» (Ա., 31, 24), «է՛յ հսկեցեք» (Թ., 147, 4 ն.), «Որտեղ ես, էյ...» (Զ., 22, 24) և այլն։ Այնուհետև էյ ձայնարկությունը զրվում է կոչական հոլովով գոյականի առաջ, որպես կոչական բացառանշություն, օրինակ՝ «է՛յ հին ծանոթներ, էյ կանաչ սարեր...» (Թ., 49, 1), «է՛յ Ձենով Օհան...» (Թ., 116, 4 ն.)... և այլն։

էյ ձայնարկության նման նաև հեյ (կամ՝ ոե) ձայնարկությունը, որը, նախ, զրվում է մեկի ուշադրությունը գրավելու կամ հրավիրելու համար, օրինակ՝ «Հե՛յ, ուր ես, Դավիթ...» (Թ., 113, 25), «Հե՛յ-հե՛յ, Դավիթ, որտեղ ես գու...» (Թ., 131, 7) և այլն։ Ապա նույն ձայնարկությունը զրվում է կոչական հոլովով գոյականի առաջ որպես կոչական բացառանշություն օրինակ՝ «Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր...» (Թ., 108, 27), «Հե՛յ պարոններ, ականջ արեք...» (Թ., 141, 1) և այլն։ Նույն ձայնարկությունը հանդես է գալիս նաև այլ ձայնարկությունների հետ մեկտեղ՝ ուրախություն կամ տխրություն արտահայտելու համար, ինչպես, օրինակ, «Հե՛յ ջան, հա ջան, ցողն ու ակունք սրտիս խորքեն ծին կառնեն...» (Ի., 156, 9—10), «Հե՛յ վախ... կոտրան իմ թևերս...» (Ի., 129, 17) և այլն։

Հեյ ձայնարկության նման գրեթե զրվում է նաև հայ ձայնարկությունը, որը համեմատաբար քիչ է պատահում. այսպես, օրինակ, «Հայ, արագ իլ բարով եկար...» (Մ., 55, 2)¹, «Հայ, սատկես գու» (Դ., 139, 5), «Հայ-հայ, մոտիկ տեղից եկա...» (Թ., 132, 19) և այլն։

Վայ ձայնարկությունը արտասանվում է դանազան շեշտերով ու տարբեր նշանակություններով։ Նախ և առաջ, վայ ձայնարկությունը հանդես է գալիս որպես ցավի՝ վշտի բացառանշություն, օրինակ, «Վայ, Դավիթ, ասավ մահը տանի քեզ...» (Թ., 120, 27), «Վայ մեր արևին, վայ մեր աշխարհ-քին...» (Թ., 120, 12), «Վայ, վայ, կոտորվեցինք, այս ինչ արավ այս մարդը» (Ա., 162, 1) և այլն։ Վայ ձայնարկությունը միաժամանակ կարող է՝ արտահայտել երկյուղի, վախի կամ տաղնապի զգացում, օրինակ՝ «Վայ, հարայ, փախեք...» (Թ., 108, 19), «Վայ, փախեք, եկավ...» (Թ., 120, 5—6), «Վայ թե հանկարծ իմանա...» (Թ., 64, 13—4) և այլն։ Նույն ձայնարկությունը արտահայտում է նաև անսոսանքի կամ խղճմտանքի զգացում, օրինակ՝ «Վայ, մեղք չէ...» (Ի., 179, 15), «Վայ քեզ, թշվառ...» (Ի., 25, 11), «Վայ թե չգա» (Պ., 67, 8) և այլն։ Վայ ձայնարկությունն արտահայտում է նմանապես դարմանք, որից և հիացմունք կամ տհաճություն, օրինակ՝ «Վայ,— զարմացավ մայրիկը» (Զ., 147, 9), «Վայ, այս ի՞նչ եմ արել...» (Մ., 93, 19), և այլն։ Վայ ձայնարկությունն արտահայտում է միաժամանակ սպառնալիք, անեծք, հայհոյանք կամ հանդիմանություն, օրինակ՝ «Վայ, անիծվես գու...» (Զ., 109, 11), «Վայ, ես քու...» (Զ., 190, 14), «Վայ, մահը քեզ տանի...» (Զ., 216, 17), «Վայ, տունդ չծակվի...» (Մ., 10, 1) և այլն։ Նույն ձայնարկությունը նաև հանկարծակի ուրախության զգացմունք է արտահայտում, օրինակ՝ «Վայ, աստծուն բարին, բարով, հազար բարի ես եկել...» (Պ., 31, 14)... և այլն։

Դրեթե նույն նշանակությամբ է գործածվում նաև վույ ձայնարկու-

¹ Վ.— Մայրենի լեզու, Ընթերցարան, 1-ին դասարանի համար, Երևան, 1947։

թյունը, ինչ որ վայրայց համեմատաբար ավելի սահմանափակ դեպքերում, սա մեծ մասամբ դրսևորվում է բարբառներում և արտահայտում է ամփոսանքի զգացում, ինչպես նաև՝ վշտի, ցավի և այլն, օրինակ՝ «Վույ, քոռանամ ես...» (Ա., 165, 10), «Բաղեն զլիսին պտտվում է — վույ, վույ, վույ...» (Ա., 15, 3—4), «Վույ, էդ ինչ վատ բան է եղել...» և այլն:

Վաճ կամ վաճ ճայնարկությունը սովորաբար դարձանք արտահայտելու բացազանչություն է, օրինակ՝ «Վահ, էս մարդիկը ինչ վաղ են քնում...» (Թ., 108, 26), «Վահ, էս ինչ եմ տեսնում...» (Պ., 281, 20), «Վա, ճգնավորն էլ մարդ է, խո դե չէ...» (Թ., 180, 10 ն.) և այլն: Նույն ճայնարկությունը կարող է արտահայտել նաև ցանկություն, երբեմն էլ հեզմանք, օրինակ՝ «Վահ, տեր Հիսուս, չարը տանես, բարին բերես...» (Դ., 238, 12) և այլն:

Վաճ ճայնարկության ալլադերպությունն է անշուշտ վախ ճայնարկությունը, որը վշտի՝ կսկծի բացազանչություն է, օրինակ՝ «Վախ, մեր կյանքը սևով անցավ...» (Ի., 111, 3), «Հեյ վախ, պիտի մեռնի՞ն, անսնի՞ն...» (Ի., 143, 2) և այլն:

Ոճ կամ ոճ ճայնարկությունը հանդիսանում է, նախ և առաջ, վշտի, տխրության, ցավի բացազանչություն, օրինակ՝ «Ո՛հ, գլուխս, գլուխս տրաքում է...» (Ա., 177, 27), «Ո՛հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ...» (Թ., 55, 2 ն.), «Օ՛հ, այսպես ողջ մեր կյանքն է վաղանցիկ...» (Հ. 30, 9), ինչպես նաև՝ «Օ՛խ-օխ-օխ... սպանեց, Մարիամ, սպանեց...» (Զ., 28, 16) և այլն: Նույն ճայնարկությունը հանդիսանում է զմայլանքի, հիացման բացազանչություն, օրինակ՝ «Օ՛հ, ինչ գեղեցիկ է մեր երկիրը» (Մ., 77, 22), «Օ՛հ, ինչ հրաշալի տեղ բերիք ինձ...» (Ն. 204, 21)¹, «Ո՛հ, ինչ չքնաղ պիտի լինի...» (Հ., 128, 17) և այլն:

Գրեթե նույն նշանակությամբ է հանդես գալիս Օ ճայնարկությունը, ինչ որ ոճ կամ ոճ: Դա արտահայտում է վիշտ կամ տխրություն, զմայլմունք կամ հիացմունք, ինչպես նաև՝ դարձանք և այլն, օրինակ՝ «Օ, սարսափելի է...» (Թ., 157, 1 ն.), «Օ, ինչպես ծանր է մտածել այդ մասին...» (Մ., 281, 11—) «Օ, օ, օ, գլուխս պտտվում է...» (Պ., 116, 6), «Օ, որքան շատ գույներ կան այստեղ» (Բ., 605, 6) «Օ, այստեղ էր, որ... ընկավ...» (ԴԱ. 50, 30)² և այլն:

Օհ և Ո ճայնարկությունների հետ է կապվում, ըստ երևույթին, ոճո ճայնարկությունը, որը մեծ մասամբ դարձանքի զգացում է արտահայտում, օրինակ՝ «Օհո, տիրացու, դու էլ այստեղ...» (Մ., 82, 23), «Ոհո, փոխվել ես, նունուֆար...» (Զ., 396, 19) և այլն:

Օֆ կամ ուֆ ճայնարկությունը արտահայտում է զգացում, նախ, ցավ զգալիս, 2) բավականություն՝ հաճույք զգալիս, 3) ձանձրալի խոսակցությունից և հոգնեցնող աշխատանքից հետո հանգիստ զգալիս և այլն, օրինակ՝ «Օֆ, ինչ դժվար է...» (Թ., 109, 15), «Օֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ...» (Թ., 127, 6 ն.) «Օֆ, աման, հաճի աղա...» (Դ., 8, 6 ն.), «Ո՛ւֆ, քոռանամ ես, այդ ինչ արեցիր...» (Բ., 112, 12), «Օֆ, լավ եղավ...» և այլն, և այլն:

Այսպես են ընդհանրապես ճայնարկությունները. նրանք սովորաբար

¹ Ն.—Նար. Դոս, Մահը, Երեան, 1946:

² ԳԱ.—Գր. Արսուկի, Բանաստեղծություններ, Երեան, 1939:

հանդես են գալիս տարրեր նշանակություններով: Այդ նշանակությունները կարելի է սահմանել տեքստերով (թե՛ ձեռով և թե՛ նշանակությամբ գրանք կարող են համընկնել տարրեր լեզուներում)¹:

Հնչյունային կազմի տեսակետից, սակայն, ձայնարկությունները միշտ էլ ավելի շատ են, քան թե նրանք գրանորված են տառերով: Ձայնարկությունները գրավոր արտահայտելիս միայն մոտավոր ճշտությամբ ենք տալիս:

Ձայնարկությունները կազմված են մեծ մասամբ մեկ կամ մի քանի ձայնավորից: Հաճախ ձայնավորին միանում է նաև այս կամ այն րադա-
ձայնը (կամ րադաձայնները): Սակայն ձայնարկությունները, որպես մարդ-
կային բարդ զգացմունքների արտահայտիչ միջոցներ, հիմնականում նա-
խատեսում են, անշուշտ, ձայնավոր հնչյունը, քանի որ առողջանությունը
ձայնի իջեցման կամ բարձրացման միջոցով կատարվում է միայն ձայ-
նավորով:

Ձայնարկությունն ամենից առաջ կարող է կազմված լինել մի հնչյուն-
ից. դա արդեն ձայնավորն է: Ձայնարկությունների դերում հանդես են
գալիս գրեթե բոլոր ձայնավորները՝ ինչպես առանձին-առանձին, այնպես
էլ նրանց տարրեր կրկնություններով, մի շարք րադաձայնների միացում-
ներով և այլն:

բ) Ձայնարկությունների բառական արժեքը. Չնայած որ ձայնարկու-
թյուններն ընդհանրապես բառական ու բառակազմական արժեք չունեն,
բայց գրանք որոշ դեպքերում, այս կամ այն չափով, հանդես են գալիս
նաև բառաստեղծական դերով, ստեղծելով որոշ կարգի նոր բառաձևեր: Չա
նաև սրա հակառակ երևույթը, երբ առանձին բառերից՝ որոշ հնչյունափո-
խության հետևանքով՝ առաջ են գալիս նոր ձայնարկություններ: Ուրեմն,
հնարավոր է առանձին ձայնարկություններից ստեղծել նոր բառական ար-
ժեքներ և, ընդհակառակն, առանձին բառերից էլ՝ որոշ կարգի ձայնարկու-
թյուններ:

Հայտնի է, որ վայ ձայնարկությունը հանդես է գալիս տարրեր շեշ-
տերով ու նշանակություններով, որպես բացագանչություն ցավի, վշտի
ափսոսանքի, տարակուսանքի, սպառնալիքի, զարմանքի, ուրախության և
այլն: Սա ձայնարկության շրջանակներից դուրս գալով՝ կազմում է առան-
ձին բառաձևեր ու տարրեր բառ-արտահայտություններ: Վայ ձայնարկու-
թյամբ ունենք, օրինակ, վայասաց (քիչ գործածական) ածական անունը և
նշանակում է Վայ ասող, վայ տվող, ողբասաց, կարեկցող, որից կազմը-
ված է վայասացություն նոր բառաձևը (նույնպես քիչ գործածական) Վայ
ասելը, վայ տալը, ողբ, կարեկցություն՝ նշանակությամբ: Նույն վայ ձայ-
նարկությամբ բարրառներում կազմված է վայրերան ածականը՝ Երեբանը
վայով բացող, միշտ վայ ասող, միշտ չարիք գուշակող, բարի բան չասող:
Բարրառներում նույն վայ ձայնարկությամբ կազմված է նաև վայնաչար
կամ վայնաչարի(ն) մակրայը (=վայ + պրսկ. načar «աճար, անօգնական»),
որ նշանակում է «աճարացած, ճարահատյալից, կամա-ակամա», ինչպես

¹ Մի շարք լեզուներում համընկնելուց բացի, կան նաև այնպիսի ձայնարկություն-
ներ, որոնք յուրահատուկ են այս կամ այն լեզվին: Այսպես, օրինակ, հայոց լեզվի յու-
րահատուկ ձայնարկություններից են՝ աման, արա, ավաղ, երանի || երնեկ, բ՛, հարայ,
հարբան, մուշ-մուշ, յա, օխայ || ուխայ, օն, օշտ և այլն:

նաև՝ վայոց գոյականը Վվայ ասելը, վայնասունք, կամ՝ վայում (հին՝ վայումն) գոյականը՝ Վվայելը, ինքն իրեն վայ տալը։ Հայտնի է վայնասուն գոյականը՝ նույն վայ ձայնարկությունամբ կազմված, որ նշանակում է ժ1. վայի ձայներ, լաց ու կոծ, ճիչ, աղաղակ, 2. նման. մեծ աղմուկ, հուզմունք շփություն, կամ վայել ըստ, որ գրաբարում չեղոք սեռի բայ է եղել և նշանակել է Վվայ աղաղակել, ճչալ, ողբալ, հեծեծելը, աշխարհաբարում ներգործական սեռի բայ է և նշանակում է Վվայ տալ մեկին, փոխառել մեկին կամ մի բան, իսկ բարբառներում նշանակում է Վրամբասել, չարախոսել կամ Վնախանձել և այլն։

Վայ ձայնարկությունամբ կազմված բառ — արտահայտություններն ու ոճերն են, օրինակ՝ վայ գլխիդ, որ նշանակում է ժ1. Վայ քեզ, 2. դու ով ես, հոգեմ գլուխդ. Վայն եկել է՝ քեզ տարել Վրու ողորմելի վիճակի մեջ ես, դու կորած ես. Վայ քո մեղքը Վվայ քեզ, վայ տալ Վվայ ասել մեկին, փոխառել, կարեկցել. Ինչ վայ տամ գլխիս Վրու ընկնեմ, ինչ անեմ թշվառս, ինչպես դուրս գամ իմ աղետալի դրությունից. հայ-հայը գնալ, վայ-վայը մնալ (հայ-հայը գնացել է, վայ-վայը մնացել) Վրավ ժամանակը՝ լավ վիճակը անցնել, վատ ժամանակը գալ, վատ վիճակը հասնել և այլն¹։

Ձայնարկություններից մեկն է նաև հայ, որ խորհրտալու բացագանչություն է։ Սա կրկնվելով կամ այլ ձայնարկությունների հետ միանալով՝ արտահայտում է տարբեր իմաստներ։ Օրինակ՝ բարբառներում հայ-հայ (հայ-ի կրկն.) որպես գոյական է հանդես գալիս և նշանակում է Վրավ վիճակ, ցանկալի դրություն. գործ է ածվում հետևյալ ոճի մեջ՝ ՎՀայհայը գնացել, վայվայն է մնացել, այն է՝ Վրավ օրերն անցան, վատ օրերը հասան, կամ նրա բախտավոր օրերը (նախկին ուժը՝ կարողությունը) անցան, այժմ խեղճ ողորմելի է մնացել, վայ-վայ է անում։

Հայ ձայնարկությունը միանալով հույ ձայնարկության հետ՝ հայ-հույ ձևով՝ հանդես է գալիս նաև որպես գոյական, որ աղմուկի՝ սպառնալիքի ժամանակ եղած բացագանչություն է, օրինակ, հետևյալ արտահայտության մեջ՝ ՎՀայ-հույ անելով ոչ ոքի չես վախեցնի, կամ Վքո հայ-հույից վախեցող չկա։ Սրա այլակերպություն է հույ-հույ, որ որպես գոյական գործ է ածվում բարբառներում և նշանակում է Վերկար տաղտկալի պատրաստություն (օրինակ՝ էդ հայ-հույ երբ պետք է վերջանա)։ Այսպես նաև հայ ձայնարկությունը միանալով հոյ ձայնարկության հետ՝ հայ-հոյ ձևով՝ տարբեր մասնիկներով ունենք՝ 1) հայնոյանք գոյականը, որ նշանակում է Վանարգական խոսք, որ ասում են մեկին՝ վիրավորելու համար և 2) հայ-հոյել ըստ (ներգործական սեռի), որ նշանակում է Վանարգել, վիրավորական բան ասել մեկին կամ մի բանի ժառանգ և այլն։

Հայ ձայնարկությունամբ կազմված բառ-արտահայտություններից և ոճերից են, օրինակ, հայ անել, որ նշանակում է ժ1. փութալ, շտապել (օր.՝ հայ արա, պրծիր), 2. (մանկ.) քնել. հայ տալ ժ1. փութացնել, շտապեցնել, 2. վանել, քշել (օր.՝ հայ տուր դրանց, ինչ են կանգնել) և այլն։

Այս ձայնարկությունը վշտի՝ ցավի բացագանչություն է։ Սա հանդես

¹ Վայ ձայնարկությունը կարող է հանդես գալ նաև խոսքի այլ մասերի դերում, օրինակ, մակրայի դերում, այսպես վայ բե՛ չգա=գուցե չգա... և այլն։

է գալիս որպէս գոյական, օրինակ, ա՛խ անել կամ ա՛խ քաշել, որ նշանակում է ճառաչել, ամսոսալ՝ (օր.՝ Ախ քաշելով ցավին դարման չի լինի), ինչպէս նաև՝ ախը քաշել (մի բանի) մի բանի կարոտությունից՝ պակասությունից ճառաչել (օր.՝ Մի պատառ ճացի ակն է քաշում)։ Ախ ձայնարկությունը միանում է այլ ձայնարկությունների հետ և տարրեր իմաստ է արտահայտում, օր.՝ ախ ու վախ, որպէս գոյական նշանակում է «1. Ա՛խ-վախ հառաչանքի ձայնը, 2. հառաչանք, վիշտ (օր.՝ Ախ ու վախով օրերս անցան)», կամ՝ ախ ու վիշ, նույնպէս գոյական, նույնն է, ինչ որ ախ ու վախը։ Այնուհետև կա նաև ախվայություն գոյականը, որ նշանակում է «ախ ու վայ անելը, հառաչելը (օր.՝ Հոգիս մորմաքոյմ է ասվայությամբ)»... և այլն։

Հափ կամ հաֆ մի ձայնարկություն է, որ արտահայտում է արագ շարժում, հատկապէս բերանը արագ-արագ բանալ-խփելը (օր.՝ Հացի կտորներ էին ձգում, շունը հափ բռնում էր օդի մեջ ու կուլ տալիս), կամ՝ (մանկ.) ուտելիքը արագարար բերանը տանելը, ուտելը (օր.՝ Հափ արա)։ Այս ձայնարկության կրկնությամբ է կազմված, անշուշտ, բարբառներում գործածվող հափհափ գոյականը, որ նշանակում է «բերանը բաց ու խուփ անելը, փխր. խոսելը, խոսելու կարողություն», որից հետևյալ արտահայտությունները՝ Հափհափ կտրիք «(նախատ.) ձայնի կտրիք, լոբիք», կամ հափհափն ընկնել «1. բերանը բաց ու խուփ անել մեռնելիս, վերջին շնչի մեջ լինել (օր.՝ Հափհափն է ընկել, ուր է, ուր չէ՝ հոգին կավանդի), 2. շատ ծերանալուց խոսելու կարողությունից զրկվել (= բերանը բաց ու խուփ անել առանց կարողանալու բառ արտասանել)»։ Այս ձայնարկության կրկնությամբ է կազմված, ըստ երևույթին, նմանապէս բարբառներում գործածվող հափափա (* < հափ-հափ արաւ) ձայնարկությունը, որ մանկական լեզվով նշանակում է «խրթ թե հափ եղավ, կերար - պարպկեր, որով արտահայտում են մի բանի պարպելը, վերջանալը, վերջացավ—էլ չկա (օր.՝ Ճան-տան, մեմե ակ հափափա—հին երգից)»¹։ սրանից էլ հափափանք գոյականը, քիչ գործածական, որ նշանակում է «հափափելը, հափափում, հափափելը» նշանակությամբ, ինչպէս նաև՝ հափափել (կրկն. ձև հափ-ի), որ ներգործական սեռի բայ է և նշանակում է «հանկարծ խլել, հափափել (մասնավորապէս կին, աղջիկ), առեանգել»։ Բարբառներում կա նաև հափել ձևը. (առանց արմատի կրկնության), որ ներգործական սեռի բայ է և նշանակում է՝ «1. հափ անել, արագապէս հանկարծ ուտել կամ խմել, 2. ձեռքով փախցնել, թոցնել (օր.՝ խնձոր հափեց ու փախաւ)», ինչպէս նաև հափռել ձևը, որ ներգործական բայ է և նշանակում է՝ «1. հափուռով խլել, վերցնել, հափափել, 2. հափել, հափ անել (օր.՝ Խո չի ուտում, շան նման հափում է)»։ Կան նաև հափի և հափու ձևերը. առաջինը նշանակում է «հափ, բերանը արագ-արագ բանալ-խփել», որից՝ հափի ճիկ) ըստ երևույթին, ճիկ=չիկ բառից), որ բարբառներում նշանակում է «1. հանկարծ աներևութանալ՝ կորչել (օր.՝ այստեղ էի դրել, հանկարծ հափի ճիկ եղավ), 2. փխր. հանկարծ և իզուր կորչել, մեռնել, 3. (մանկ.)

¹ Հմմտ. Սա. Մալխասյանցի «Հայերեն բացառական բառարանը»։

իրրի ինչ հափ եղավ, պրծավ՝ և րիլրորդը՝ հափու նշանակում է բարբառ-
ներում ժ(մանկ.) ուտելիքը արագարար բերանը տանելը, ուտելը և այլն:

Կատուն կանչելու ձայնարկությունն է փիսի-փիսի կամ փիսո-փիսո, որ միաժամանակ մանկական խաղի անուն է գյուղերում: Կատուն կան-
չելու ձայնարկությունն է նաև փի՛սփի՛ս կամ փր՛սփր՛ս, ինչպես նաև՝
փշի-փշի, իսկ կատուն քշելու կամ փախցնելու ձայնարկությունն է՝ հափ-
սա(<հափսա): Այս ձայնարկությունից է՝ փիսիկ գոյականը (կոչ. փիսոն,
փիսո-փաղաք.), որ նշանակում է տկատ [օր.՝ ժրարի՛րիկուն, ուստա փի-
սո, փիսոն-փիսոն, ում կատուն ես (մանկ. խաղ), կամ՝ փիսոն-փիսոն
մլավան, Թավրիզ թողեց, գնաց Վանա]: Այսպես նաև՝ Փիստանիկ (մանկ.)
գոյական, որ նշանակում է տե՛ծ կատուն և այլն:

Վաշ ձայնարկությունը գրաբարում ուրախության զգացմունքի ցա-
ցազանչություն է և նշանակում է ժինչ լավ է, ասլեհ, կեցցեհ կամ կեց-
ցե, ուխայ (հմմտ. վրց. վաշա՛ բացագանչությունը, բստ իս, ձեա-բովան-
դակական համարժեքը): Դործ էր ածվում երբեմն տր. հոլովի հետ. օրինակ՝
վաշ քեզ, վաշ ինձ, վաշ արարչին: Կար նաև սրա սաստկական ձևը կրրկ-
նությունամբ՝ ածական, քիչ գործածական, որ նշանակում է ժվաշ ասելու
արժանի, պանծալի: Բարբառներում գործ է ածվում վաշ-վիշ կամ վաշ-
վշոց գոյականը (վաշ-ի կրկն. ձև), որ նշանակում է ժափսոսանք, ախուժախ-
հեծեծանք (օր.՝ Վաշ-վիշ անելով մղկոտում էր, կամ՝ վաշ-վիշն օգոտ չու-
նի, վաշ-վիշ անելով մեռելը չի սաղանա)... և այլն:

Այստեղ պետք է նշել նմանապես այնպիսի ձայնարկություններ, որոնք
երկու առում ունեն, այն է՝ ձայնարկության հետ միասին նաև գոյականի
առում: Այսպես, օրինակ, հաշու բարբառներում ձայնարկություն է և ցույց
է տալիս ճշորդորական ձայն, որով էշը կամ ձին առաջ են քշում, չու՛:
Սա միաժամանակ մանկական լեզվով գոյական է և նշանակում է ժծի՛
(օր.՝ Այ, հաշուն եկավ): Այսպես նաև՝ հոլո-հոլո շշուներ կանչելու ձայն է՝
(օր.՝ Շանը հոլո-հոլո արա, որ գա), որ մանկական լեզվով շշուն էլ է նշա-
նակում և այլն, և այլն:

զ) Առանձին բառերից ձայնարկություններ. Ինչպես տեսանք, ոչ միայն
որոշ ձայնարկություններից կարող են նոր բառաձևեր (նոր բառական ար-
ժեքներ) ստեղծվել, այլև առանձին բառերից էլ կարող են նոր ձայնարկու-
թյուններ առաջ գալ՝ մեծ մասամբ հնչյունական փոփոխության հետևանքով:

Այսպես, օրինակ, ջան բառը, որ նույնն է պրսկ. gan ճոգի, ոգի՝
բառի հետ, գոյական անուն է և նշանակում է տկյանք, կենդանություն
(օր.՝ ջանիդ մատաղ կամ ջանիդ մեռնեմ), 2. հոգի, շունչ, անձ (օր.՝ ջանդ
սաղ լինի), 3. ած. իրրև փաղաքական խոսք գրվում է գոյականին կից
(օր.՝ հոգի ջան, որդի ջան) և այլն: Այս նույն բառն հանդես է գալիս նմա-
նապես իրրև ձայնարկություն - բացագանչություն, որով գոհունակու-
թյուն են հայտնում, խրախուսում են երգողին կամ խոսողին (օր.՝ ջան՝
աշուղ ջան, ձայնդ անսպառ, կամ՝ ջան, ջան, բերանիցդ մարգարիտ է
թափվում) և այլն:

Ափսոս ձայնարկությամբ, որ նույնն է պրսկ. afsos ցցավ, ավաղ՝ բառի
հետ, ցավ են հայտնում մի եղելության մասին կամ մի բան գլուխ չգալու
մասին (օր.՝ Ափսոս, որ ուշացա), և այլն: Սա սովորաբար առանձին բա-
ռական արժեք ունի, որով՝ ափսոս տալ, կամ՝ ափսոսուլ (|| ափսոսել), որ

ներգործական սեռի բայ է և ցավ է արտահայտում մի եղելություն կամ մի բան գլուխ չգալու մասին, արտասանվողի ցավալիք, արտասանվողի սալը, կորուստի մասին ցավ արտահայտելը, զղջալը և այլն¹,

Սրա նման նաև ավաղ բառը, որը որպես գոյական, վշտի՝ ցավակցության ձայն է և նշանակել է Վիշտ, արտասանք (օր.՝ ավաղ տալ մեկին, հնում՝ աւաղս արկանել ցավաղի ձայներ արձակել, արտասանք արտահայտել)։ Սրանով կաղմվել են տարբեր բառաձևեր, ինչպես օր.՝ ավաղաբեր, որ հնում նշանակել է Վիշտալի լուր բերող, բոթարեր, ավաղաբույս, որ նշանակել է խղճալի բուսականություն ունեցող, ավաղակն, որ նշանակում է ցավաղ պարունակող, ողբական, վշտալիք, ավաղակոչ, որ նշանակել է ցավաղ կարգացող, ինքն իրեն ավաղող, ավաղաձայն, որ նշանակել է ցավաղի ձայն արձակող, ողբացող, արտասացող, որից և՛ ավաղաձայնություն ցավաղի ձայն արձակելը, ողբի՝ վշտի ձայն, ինչպես նաև՝ ավաղանք ցավաղելը, արտասալը, ողբալը, ավաղապես, որ հնում նշանակել է ցավաղելի կերպով, խղճալի կերպով, ավաղելի թինչ որ արժանի է ավաղելու, արտասալու, ցավալիք, ավաղիկ կամ ավաղուն ցավաղելի, խղճալի, եղկելիք։ Կա նաև ավաղել բայը, որ ներգործական սեռի բայ է, նշանակում է ցավաղ ասել, վիշտ՝ ցավ արտահայտել, սգալ, ողբալ, արտասալ։ Այս բոլորից հետո ավաղ բառը հանդես է գալիս որպես ձայնարկություն, որով, բնականաբար, արտահայտվում է վիշտ, ցավակցություն, համազոր ցավ, արտասանվողի նարկություններին (օր.՝ Ավաղ, այդ չեղավ, կամ՝ ավաղ մեղ)... և այլն²։

Որպես ձայնարկություն, հայերենում գործ է ածվում երանի բառը, որով խոսողն արտահայտում է իր բարյացակամ զգացմունքը մեկի կամ մի բանի վերաբերմամբ, որին համարում է երջանիկ, բախտավոր, երանելի՝ երնել նշանակությամբ (օր.՝ երանի՛ քեզ, որ այդպիսի որդի ունես),

¹ Բարբառներում գործ է ածվում. օրինակ, Բա բառը, որպես ձայնարկություն։ Սա գործ է ածվում նաև վրացերենում, առաջացած լինելով վրաց. Բալա || Բալի «աղջիկ» բառի հապավումից։ Սա կոչական բառ է, որով կանայք դիմում են իրար (օր.՝ Բա՛ սուգիկ), և գործ է ածվում հաճախ առանց գոյականի (օր. Բա՛ վե՛ր կաց), կամ հանդես է գալիս իբրև բացազանչություն, որով կանայք հարցական ձևով զարմանք են արտահայտում (օր.՝ Բա՛ ի՞նչ կրես || Ի՞նչ կրես Բա՛) և այլն։ Այս Բա բառը բարբառներում հանդես է գալիս այլ ձայնարկությունների հետ միացյալ՝ Բալան (Բա + Լան), որ ասիրալի բացազանչություն է, որով երեխաները դիմում են իրենց մորը, մանավանդ տատին, որոնք պատասխանում են՝ հա Լան = Ինչ է՞ (սա միաժամանակ գոյական անուն է, որով երեխաները կոչում են իրենց մորը, մանավանդ տատին, օր.՝ զնա Բալանիդ մոց)։ Այսպես նաև՝ Բալա ($< Բա + Բա$), որ կոչական բառ է և որով կանայք դիմում են իրար (համազոր Բա ձայնարկության, որ հնում գործ է ածվել նաև լրիվ ձևով՝ Բալ կամ Բալա, ինչպես այդ վրացերենում էլ է, համազոր Բալ աղջիկ, այ կնիկ՝ կապակցություններին)։

Ծո (|| տո) նմանապես կոչական ձայնարկություն է բարբառներում, որով կանչում են տղաներին, ընկերը ընկերին, կամ տեղ-տեղ մարդը՝ կնոջ։ Սա ևս գալիս է առանձին ծուլա բառից (որ գործ է ածվել հին հայերենում և այսօր էլ պահպանված է վրացերենում՝ Մուլա || ծուլի «որդի, տղա» նշանակությամբ)։

Հայերենում այսօր սովորական են դե || դեհ ձայնարկությունները, որոնք հորդորական՝ խրախուսական բացազանչություն են։ Եթե սա նույնն է վրաց. Ծց! (դե < զան դանխսեն «թող, բաց թող») ձայնարկության հետ, ապա դա ծագում է առանձին բայաձևից՝ վրաց. դանխսեն «թող, բաց թող» նշանակությամբ, և այլն։

² Ուս բառը, իբրև ձայնարկություն, լուրջ նշան է (օր.՝ սուս, գալիս է)։ սրանից ունենք սուսուփուս, սուսիկ-փուսիկ, սուս կենալ, սուս աճել և այլն։ Սա բարբառներում գործ է ածվում սո՛ւ կամ սո՛ւս ձևով և այլն։

կամ որով խոսողն արտահայտում է իր ցանկությունը՝ «Երնէկ, ուր էր թե՛ նշանակութամբ (օր.՝ երանի՛ ասածդ կատարվի)։ Սա հանդես է գալիս որպէս գոյական և նշանակում է «երանի ասելը, երանի ասելով զգացմունքը՝ արտահայտելը» (օր.՝ երանի տալ, հին՝ երանիս տալ)։ Սրանից կան մի շարք բառաձևեր, օրինակ, Երանիկ, որ հնում նշանակել է «երանելի, բարերարիստ», իսկ բարբառներում, որպէս գոյական, «բարօրություն, երջանկություն» իմաստով (օր.՝ երկու երանիկ միասին չի լինի), կամ՝ երանյակ ածական անունը՝ քիչ գործածական, «երանելի, բարերարիստ» իմաստով (գործ է ածվում իբրև իգական անուն), ինչպէս նաև՝ երանուհի ածական անունը, նախ «երանելի կին» (օր.՝ երանուհի նահատակը) և ապա, որպէս գոյական, գործ է ածվում իբրև իգական անուն. սրա մի այլաձևությունն է երանելուհի անունը՝ նշ.՝ երանուհի։ Եղել է նաև քիչ գործածական երանողակն ձևը, որպէս ածական, «երանական, երանելի» իմաստով, նաև երանելի ձևը, որ նշանակում է «գերերջանիկ, 2. սովորաբար գործ է ածվում մեծած առաքինի մարդկանց մասին (օր.՝ երանելի մարդ)», իսկ բարբառներում՝ «(ալելի ձագրական մտքով) միամիտ, այս աշխարհից՝ կյանքից անտեղյակ»։ Կա նաև երանություն գերագույն երջանկություն, կատարյալ բարօրություն (օր.՝ «Տիեզերական դու բաժակ անհուն՝ ոսկի արբեցման ու երանության»), 2. երանի տալը, երանի կոչելը՝ (հնում նշանակել է նաև ճշութեան բարիք, հարստություն, ապրանք, 2. հարգական տիտղոս բարձր հոգևորականներին), ինչպէս նաև՝ երանել բայը «երանի տալ, երանի ասել, բարերարիստ՝ երանելի ճանաչել՝ կոչել. սրա հակառակը՝ վայել, վայ տալ» և այլն, և այլն¹։

դ) Բնաձայնական ձայնարկությունները. Մենք տեսանք, մեծ մասամբ, այսպէս կոչված, բացազանչական և կոչական ձայնարկությունները։ Բացի այդ ձայնարկություններից, պետք է վերցնել, այսպէս կոչված, բնաձայնական ձայնարկությունները։ Սրանք սովորաբար մեզ վրա թույլած առաջին կամ հանկարծական տպավորության տակ դրսևորած ընդթյան որևէ երևույթի, կենդանական ու նյութական աշխարհի, կամ կենդանիների ու առարկաների նմանողութամբ մեր արտասանած որոշ հնչումներն են՝ տարբեր հնչյունակոմպլեքսներով։ Դրանք խիստ պայմանական են իրենց գրության ու արտաբերման տեսակետից։ Այս պատճառով էլ նրանց գրության ձևերը Երբեմն տարբեր են լինում, այսպէս, օրինակ, գրվում է թէ՛ դըմբ և թէ՛ դըմբ, թէ՛ զընգ և թէ՛ զընգ, թէ՛ զանգ և թէ՛ զրանգ, թէ՛ քըխկ և թէ՛ քըքխկ, թէ՛ քրախկ և թէ՛ քըքրխկ, թէ՛ չափ և թէ՛ չըփ... և այլն։

Ինչպէս բնահանրապէս բացազանչական և կոչական ձայնարկությունները, այնպէս էլ բնաձայնական ձայնարկությունները կարող են հանդես գալ նաև խոսքի մյուս մասերի դերում։ Այսպէս օր.՝ «Զըրնդ, զըրնգ, զվարթ ձենով գործը թնդաց մեր հանդին» (Թ., 136, 6). այս նախադասության մեջ զըրնգ հնչյունակոմպլեքսը բնաձայնական ձայնարկություն է, որը կրկնված է միտքն ուժեղացնելու նպատակով և գրության մեջ ստո-

¹ Մի այլ օրինակ. Խալիկ «մեղքերը սրբել, փարատել» բայի արմատն է Խալի, որ հանդես է եկել որպէս ձայնարկություն և նշանակել է «հեռու ինձանից (բեզանից...), այդպէս բան չլինի»։ Սովորաբար գործ է ածվել Խալ լիցի ձևով. եղել են նաև՝ Խալ Լեզ (կամ՝ Խ ԼԵ) «հեռու բեզանից», կամ՝ Խալ մի՛ լիցի «բավ լիցի» և այլն։

րակետով անջատված է նախադասությունից ու նրա հետ անմիջապես չի կապվում, միայն դա, այսպես ասած, բացահայտում է գործի զվարթ ձայնը, Այս բնածայն ձայնարկությունից կազմվում է, օրինակ, բայր այսպես՝ զրընգ→զրնգում է, զրնգալով, ինչպես նաև՝ գոյական անունը, այսպես՝ զրընգ→զրնգոց և այլն։ Այսպես նաև՝ զրնգ ձայնարկությունից կազմվում է զնգալ բայր և զնգոց գոյականը։

Վերջենք նմանապես հետևյալ նախադասությունը. «Դրմբ, հա դրմբ թմբուկ զարկին...» (Թ., 136, 7)։ Այստեղ ևս դրմբ կամ դրմբ բնածայնական ձայնարկություններ են, որոնք նախադասությունից անջատված են ստորակետով. սրանցով կազմվում են նմանապես բայ ու գոյական, այսպես, օրինակ, դմբալ կամ դմբալ բայր և դմբոց կամ դմբոց գոյականը։ Մի այլ նախադասություն. «Ժիտը ծառին ծվվում է — ծվվ, ծվվ, ծվվ...» (Ա., 15, 1—2), որտեղ՝ ծվվ բնածայնական ձայնարկություն է (կրկնված), որի կրկնությունը կազմվում են՝ ծվծվալ բայր և ծվծվոց գոյականը։ Այսպես նաև՝ քըխ կամ քըքի ձայնարկությունից կազմվում են՝ քիկալ կամ քըքիկալ բայր և քիկոց կամ քըքիկոց գոյականը (օր.՝ հետևյալ նախադասություններին մեջ՝ «Ախորժելի չէ իմ վայտե ոտի թխկոցը քըխկ-դըխկ, քըխկ-դըխկ...» — Զ., 69, 26—7 և «Սկսեցին կտրել մեր անտառի մի մասը. — թըրխկ հա թրախկ... թրախկ հա թըրխկ...» — Զ., 183, 24—5)։ Թըշ ձայնարկությունից կազմվում են՝ թշշալ բայր և թշշոց գոյականը. Թըմփ ձայնարկությունից կազմվում են՝ քմփալ բայր և քմփոց գոյականը. Գաք կամ ցըք ձայնարկությունից կազմվում են՝ ցաքել կամ ցըքել բայր և ցաքոց կամ ցըքոց գոյականը. Գըռռ ձայնարկությունից՝ ցըռալ բայր և ցըռոց գոյականը. շըխի կամ շըքի ձայնարկությունից՝ շիկալ կամ շըքիկալ բայր և շիկոց կամ շըքիկոց գոյականը. վըզզ ձայնարկությունից՝ վզզալ բայր և վզզոց գոյականը. տըզզ ձայնարկությունից՝ տզզալ բայր և տզզոց գոյականը, և այսպես գրեթե բոլոր բնածայնական ձայնարկություններից։

Այսպես կարելի է դարձյալ օրինակներ բերել, բայց այսքանն էլ բավական է համոզվելու, որ ընդհանրապես ձայնարկությունները, այս թվում մանավանդ բնածայնական ձայնարկությունները, բացի իրենց հիմնական դերից, կատարում են նաև որոշ բառաստեղծական դեր՝ ստեղծելով մի շարք նոր բառաձևեր։ Բառաստեղծական տեսակետից համեմատաբար ավելի լայն առումով են հանդես գալիս բնածայնական, քան կոչական և բացագանչական ձայնարկությունները։ Սրանով, իր հերթին, այս կամ այն չափով, հարըստանում է հայոց լեզվի բառային կազմը։